Երկրորդ ընթերցում
Նախագիծ
(լրամշակված 15.05.2014թ)

Կ-374[2]-30.10.2013,06.03.2014-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հունիսի 17-ի քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 78-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 78. Դատական ծանուցումը

1. Գործին մասնակցող անձինք դատական նիստի կամ առանձին դատավարական գործողություններ կատարելու ժամանակի եւ վայրի մասին տեղեկացվում են դատական ծանուցագրերի միջոցով: Դատական ծանուցագրերով դատարան են կանչվում նաեւ վկաները, փորձագետները եւ թարգմանիչները:

2. Դատավարության մասնակիցներին դատական ծանուցագիրը՝

1) ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ,

2) հանձնվում է առձեռն, կամ

3) ուղարկվում է էլեկտրոնային եղանակով՝ սույն հոդվածի 4-րդ, 9-րդ եւ 10-րդ մասերով սահմանված դեպքերում եւ կարգով:

3. Դատական ծանուցագիրն ուղարկվում է դատավարության մասնակցի նշած հասցեով:

4. Իրավաբանական անձանց ծանուցումը կատարվում է «Ինտերնետով հրապարակային եւ անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով:

5. Դատական ծանուցագիրը պետք է հանձնվի անձամբ հասցեատիրոջը: Ծանուցագիրը համարվում է անձամբ հանձնված, եթե դրա ստացման մասին անդորրագիրը ստորագրված է անձամբ հասցեատիրոջ կողմից, կամ հասցեատերը ծանուցումը ստանալու անդորրագրի վրա ստորագրել է ծանուցագիրը ստանալուց հրաժարվելու մասին:

6. Եթե դատավարության մասնակից ֆիզիկական անձն իր հասցեն չի հայտնել կամ նրա հայտնած հասցեով ուղարկված ծանուցագիրը հետ է վերադարձվել դատարան կամ դատական նիստը սկսվելու պահին դատարանը չի ստացել ծանուցման մասին անդորրագիրը, ապա դատարանը դատական ծանուցագիրը ուղարկում է այդ անձի հաշվառման հասցեով, ինչպես նաեւ համապատասխան համայնքի ղեկավարին (Երեւան քաղաքում՝ համապատասխան վարչական շրջանի ղեկավարին) :

7. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված գործողությունները կատարելու հետ միաժամանակ դատական ծանուցագիրը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

8.Դատական նիստին ներկայացած դատավարության մասնակիցները հաջորդ դատական նիստի ժամանակի եւ վայրի մասին դատարանի կողմից ծանուցվում են բանավոր կարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատական նիստը համակարգչային ձայնագրման եղանակով չի արձանագրվում, որի դեպքում դատարանը դատական նիստին ներկայացած դատավարության մասնակցին հաջորդ դատական

նիստի ժամանակի եւ վայրի մասին ծանուցում է դատական նիստի ավարտից հետո դատական ծանուցագիրը առձեռն հանձնելով:

9. Դատավարության մասնակցի գրավոր դիմումի հիման վրա դատական ծանուցումը կարող է կատարվել հեռախոսագրի, կարճ հաղորդագրության կամ էլեկտրոնային հեռահաղորդակցության այլ միջոցներով:

10. Դատարանի կողմից ֆիզիկական անձին ուղարկված էլեկտրոնային ծանուցագիրը պատշաճ ձեւով ծանուցում է համարվում նաեւ այն դեպքում, երբ ծանուցումը կատարվել է «Ինտերնետով հրապարակային եւ անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

11. Եթե դատավարության մասնակիցը գտնվում է քրեակատարողական հիմնարկում, ազատազրկման վայրում, զորամասում կամ կարգապահական գումարտակում, ապա դատական ծանուցագիրը պետք է ուղարկվի այդ հաստատությունների հասցեներով: Այդ հաստատությունների վարչակազմերը դատական ծանուցագիրը ստանալուն պես պարտավոր են այն հանձնել հասցեատիրոջը՝ նրա կողմից ստանալը հավաստող անդորրագիրը վերադարձնելով դատարանին»:

Հոդված 2. Օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Պատասխանող ֆիզիկական անձի փաստացի գտնվելու վայրն անհայտ լինելու դեպքում դատարանը գործը քննում է սույն օրենսգրքի 78-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված գործողությունները կատարելուց հետո»:

Հոդված 3. Օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Դատարանն իրավունք ունի հետաձգել գործի քննությունը, եթե՝

1) գործին մասնակցող անձանցից որեւէ մեկը կամ նրա ներկայացուցիչը դատարանի կողմից հարգելի ճանաչված պատճառով չի ներկայացել դատական նիստին եւ ներկայացրել է գործի քննությունը հետաձգելու վերաբերյալ գրավոր միջնորդություն.

2) այն չի կարող քննվել տվյալ նիստում՝ վկաների, փորձագետների կամ թարգմանիչների չներկայանալու պատճառով.

3) դա թելադրված է ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությամբ.

4) դա թելադրված է գործին մասնակցող անձի կողմից ներկայացված լրացուցիչ ապացույցներին գործին մասնակցող այլ անձանց ծանոթանալու անհրաժեշտությամբ.

5) գործին մասնակցող անձանցից որեւէ մեկը միջնորդում է տրամադրել ողջամիտ ժամկետ՝ վեճը հաշտությամբ լուծելու համար, եւ գործին մասնակցող մյուս անձինք չեն առարկում.

6) ներկայացվել է հակընդդեմ հայց կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ.

7) հայցվորը ներկայացրել է հայցի առարկան կամ հիմքը փոփոխելու վերաբերյալ միջնորդություն.

8) ավարտվել է աշխատանքային օրը, եթե օրենքով գործի քննության հատուկ ժամկետներ սահմանված չեն.

9) դատական նիստը չի կարող շարունակվել նիստերի դահլիճում ներկա գտնվող անձանց կողմից թույլ տրվող դատական նիստի կարգի զանգվածային խախտումների պատճառով.

10) առաջին ատյանի դատարանը որոշել է գործի քննությանը ներգրավել գործին մասնակցող նոր անձ.

11) առկա են առողջական վիճակի հետ կապված կամ այլ անձնական բնույթի հարգելի հանգամանքներ, որոնք անհնար են դարձնում դատարանի կողմից գործի քննությունը.

12) օրենքով սահմանված այլ հիմքերի առկայության դեպքում»:

Հոդված 4. Օրենսգրքի 130-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3.Դատարանի վճիռը պետք է լինի օրինական, հիմնավորված եւ պատճառաբանված»:

Հոդված 5. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 130.1-րդ հոդվածով.

«Հոդված 130.1. Վճռի օրինականությունը,հիմնավորվածությունը եվ պատճառաբանվածությունը

1. Առաջին ատյանի դատարանի վճիռն օրինական է, եթե այն կայացվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, սույն օրենսգրքի, այլ օրենքների եւ այլ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառելի են տվյալ գործը քննելիս:

2. Առաջին ատյանի դատարանի վճիռը հիմնավորված է, եթե վճռում շարադրված եզրահանգումները եւ հաստատված փաստերը համապատասխանում են առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցներին:

3. Առաջին ատյանի դատարանի վճիռը պատճառաբանված է, եթե դրանում երեւում է փաստերի հաստատման, ապացույցների գնահատման եւ իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը եւ դրանից բխող եզրահանգումները»:

Հոդված 6. Օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Առաջին ատյանի դատարանը վճիռ կայացնելիս՝

1) գնահատում է ապացույցները.

2) որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ փաստերն են ապացուցվել, եւ որոնք չեն ապացուցվել.

3) որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա իրավական նորմերը.

4) որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը.

5) գործին մասնակցող անձանց միջեւ բաշխում է դատական ծախսերը.

6) լուծում է կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանելու կամ վերացնելու հարցը»:

Հոդված 7. Օրենսգրքի 132-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 132. Վճռի բովանդակությունը

1. Դատարանի վճիռը կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական եւ եզրափակիչ մասերից:

2. Վճռի ներածական մասը պետք է պարունակի վճիռ կայացնող ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի անվանումը, դատարանի կազմը, գործի համարը, վճիռը կայացնելու տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը, գործին մասնակցող անձանց եւ նրանց ներկայացուցիչների անունը, ազգանունը, հայրանունը՝ անձը հաստատող փաստաթղթում հայրանվան առկայության դեպքում (անվանումը), հայցի առարկան: Վճռի ներածական մասում պետք է նշվի նաեւ գործին մասնակցող անձանց եւ նրանց ներկայացուցիչների՝ անձը հաստատող փաստաթղթի տվյալները, իրավաբանական անձի դեպքում՝ հարկ վճարողի հաշվառման համարը եւ պետական գրանցման վկայականի համարը, նրանց հաշվառման վայրի հասցեները, իսկ ներկայացուցիչների մասնակցության դեպքում նաեւ որպես ներկայացուցիչ հանդես գալու համար հիմք հանդիսացած փաստաթղթի տվյալները:

Վերը նշված տեղեկությունները վճռի ներածական մասում նշվում են նաեւ երրորդ անձանց վերաբերյալ, եթե այդպիսիք դատարանը ստացել է գործի քննության ընթացքում:

3. Վճռի նկարագրական մասը պետք է պարունակի՝

1) նշում այն մասին, թե երբ է հայցը ներկայացվել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, երբ է այն ընդունվել վարույթ,

2) նշում հայցի առարկայի կամ հիմքի փոփոխության մասին՝ փոփոխության դեպքում նշելով փոփոխության ամսաթիվը եւ էությունը,

3) նշում հայցադիմումի պատասխան եւ (կամ) հակընդդեմ հայց, հակընդդեմ հայցի պատասխան ներկայացնելու մասին,

4) նշում գործին երրորդ անձանց ներգրավելու մասին.

5) նշում՝ առանձին ակտի ձեւով ընդունված որոշումների մասին,

6) նշում վերադաս դատարանի կողմից գործը նոր քննության ուղարկված լինելու մասին: Տվյալ դեպքում շարադրվում է նաեւ համապատասխան դատավարական նախապատմությունը՝ նշելով վերադաս դատարանի սահմանած գործի նոր քննության ծավալը,

7) նշում՝ գործին մասնակցող անձանց եւ նրանց ներկայացուցիչների դատական նիստին ներկայանալու կամ չներկայանալու մասին,

8) հայցադիմումի հակիրճ բովանդակությունը՝ յուրաքանչյուր պահանջը, յուրաքանչյուր պահանջի հիմքում դրված փաստերը՝ շարադրելով այն փաստերը, որոնց վրա հիմնվում է հայցվորը, յուրաքանչյուր պահանջի իրավական հիմքերն ու հիմնավորումները՝ վկայակոչելով օրենքների եւ այլ իրավական ակտերի նորմերը,

9) պատասխանողի դիրքորոշման հակիրճ բովանդակությունը՝ հայցվորի յուրաքանչյուր պահանջն ընդունելու կամ դրա դեմ ամբողջությամբ կամ մասնակի առարկելու վերաբերյալ, առարկության փաստական հիմքը՝ շարադրելով այն փաստերը« որոնց վրա հիմնվում է պատասխանողը, առարկության իրավական հիմքը՝ շարադրելով պատասխանողի փաստարկները պահանջի իրավական հիմնավորման վերաբերյալ եւ վկայակոչելով օրենքի եւ այլ իրավական ակտերի նորմերը,

10) վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձի դիրքորոշումը, որը շարադրվում է սույն մասի 8-րդ կետով սահմանված կարգով,

11) վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձի դիրքորոշումը, որը շարադրվում է սույն մասի համապատասխանաբար 8-րդ կամ 9-րդ կետերին համապատասխան,

12) հակընդդեմ հայցվորի եւ հակընդդեմ հայցով պատասխանողի դիրքորոշումները, որոնք շարադրվում են սույն մասի համապատասխանաբար 8-րդ եւ 9-րդ կետերին համապատասխան:

4. Վճռի պատճառաբանական մասը պետք է պարունակի.

1) գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը,

2) եզրահանգում կիրառելի իրավունքի վերաբերյալ՝ միջազգային պայմանագրերի, օրենքների եւ այլ իրավական ակտերի այն նորմերի, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, որոշումների վկայակոչմամբ, որոնք ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը վերաբերելի է համարում,

3) ապացուցման կարիք չունեցող փաստերը՝ նշելով, թե սույն օրենսգրքի 52-րդ հոդվածի որ մասի հիման վրա եւ ինչ հիմքով է գործին մասնակցող անձն ազատվում տվյալ փաստի ապացուցման պարտականությունից

4) ապացուցման ենթակա փաստերը՝

ա. շարադրելով ապացուցման ենթակա յուրաքանչյուր փաստը,

բ. նշելով, թե ով է կրում ապացուցման ենթակա յուրաքանչյուր փաստի ապացուցման պարտականությունը եւ որ իրավական նորմի հիման վրա,

գ. առաջին ատյանի դատարանի եզրակացությունը տվյալ փաստի ապացուցված լինելու վերաբերյալ՝ գնահատելով տվյալ փաստի հաստատման կամ մերժման համար գործին մասնակցող անձանց կողմից ներկայացված յուրաքանչյուր ապացույցը՝ սույն օրենսգրքի 51-րդ եւ 53-րդ հոդվածներին համապատասխան,

5) եզրահանգում՝ գործին մասնակցող անձի կողմից ներկայացված ապացույցն անթույլատրելի, ոչ վերաբերելի կամ ապացուցողական ուժ չունեցող համարելու դեպքում՝

ա. հղում կատարելով այն իրավանորմերի վրա, որոնց հիման վրա ապացույցը ճանաչվել է անթույլատրելի, ոչ վերաբերելի կամ ապացուցողական ուժ չունեցող,

բ. շարադրելով այն փաստերը, որոնց հիման վրա դատարանը հանգել է նման եզրահանգման:

6) եզրահանգում՝ գործին մասնակցող անձանց պահանջների եւ առարկությունների հիմնավորվածության վերաբերյալ.

7) գործին մասնակցող անձանց միջեւ դատական ծախսերի բաշխման վերաբերյալ առաջին ատյանի դատարանի պատճառաբանությունը:

5. Վճռի եզրափակիչ մասը պետք է պարունակի՝

1) յուրաքանչյուր պահանջը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու մասին կամ գործի վարույթը կարճելու մասին դատարանի եզրակացությունը,

2) սկզբնական եւ հակընդդեմ հայցերը լրիվ կամ մասնակի բավարարելու դեպքում նշում՝ հաշվանցի արդյունքում բռնագանձվող գումարի մասին,

3) գործարքն անվավեր ճանաչելու դեպքում նշում՝ գործարքի անվավերության հետեւանքների մասին,

4) եզրահանգումներ՝ գործին մասնակցող անձանց միջեւ դատական ծախսերը բաշխելու վերաբերյալ,

5) եզրահանգում՝ կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանելու կամ վերացնելու մասին,

6) կատարում ենթադրող վճիռ կայացնելու դեպքում նշում՝ վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն պարտապանի հաշվին հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով կատարելու մասին,

7) վճռի բողոքարկման ժամկետն ու այն վերադաս դատական ատյանը, որտեղ կարող է ներկայացվել բողոքը:

5. Առաջին ատյանի դատարանի վճռի յուրաքանչյուր էջը ստորագրվում եւ կնքվում է այն կայացրած դատավորի կողմից»:

Հոդված 8. Օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասում 5-րդ կետում «հիմնավորումները» բառից հետո լրացնել « ՝ վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն որոշումները, որոնք վերաքննիչ բողոք բերած անձը վերաբերելի է համարում՝ մեջ բերելով դրանց հակասող մասերը եւ կատարելով համեմատական վերլուծություն,» բառերը:

Հոդված 9.Օրենսգրքի 217-րդ հոդվածի 4-րդ մասում «զեկուցող» բառը փոխարինել «նախագահող» բառով, իսկ «զեկուցողին» բառը՝ «նախագահող դատավորին» բառերով:

Հոդված 10. Օրենսգրքի 220-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ՀՈԴՎԱԾ 220. Վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացվող որոշումը

1. Վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքներով վերաքննիչ դատարանը կայացնում է որոշում, որը պետք է բավարարի սույն օրենսգրքի 130.1-րդ հոդվածով սահմանված պահանջներին:

2. Վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում կայացված որոշումը կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական եւ եզրափակիչ մասերից:

3. Որոշման ներածական մասը պետք է պարունակի՝

1) վերաքննիչ դատարանի լրիվ անվանումը, գործի համարը, որոշման կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, վայրն ու վերաքննիչ դատարանի կազմը.

2) վճիռ կայացրած ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի անվանումը, վճռի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, դատավորի անունը, ազգանունը.

3) գործին մասնակցող անձանց եւ նրանց ներկայացուցիչների անունները, ազգանունները (անվանումները), վերաքննիչ բողոք բերած անձի անունը, ազգանունը (անվանումը), վերաքննիչ բողոքի դեմ պատասխան ներկայացվելու դեպքում նաեւ՝ պատասխանը ներկայացրած անձի անունը, ազգանունը (անվանումը):

4. Որոշման նկարագրական մասը պետք է պարունակի՝

1) գործի դատավարական գործընթացի նկարագրությունը, վճռի հրապարակման օրը, ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից կայացված վճռի եզրափակիչ մասի հակիրճ բովանդակությունը,

2) գործը վերադաս դատարանից նոր քննության ուղարկված լինելու դեպքում՝ նաեւ համապատասխան դատավարական նախապատմությունը՝ նշելով վերադաս դատարանի կողմից սահմանած գործի նոր քննության ծավալը,

3) նշում՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ առանձին ակտի ձեւով ընդունած որոշումների մասին,

4) նշում՝ վերաքննիչ դատարանի՝ առանձին ակտի ձեւով ընդունած որոշումների մասին,

5) վերաքննիչ բողոքի հիմքերը եւ հիմնավորումները, վերաքննիչ բողոք ներկայացրած անձի պահանջը, վերաքննիչ բողոքի պատասխանի առկայության դեպքում՝ պատասխան ներկայացրած անձի դիրքորոշումը եւ հիմնավորումները:

5. Որոշման պատճառաբանական մասը պետք է պարունակի՝

1) գործով պարզված եւ վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, այդ թվում՝

ա. այն փաստերը, որոնք հաստատվել են դատարանի կողմից եւ վերաքննիչ բողոքում չեն վիճարկվել,

բ. այն փաստերը, որոնք հաստատվել են դատարանի կողմից եւ վերաքննիչ բողոքում վիճարկվել են, սակայն վերաքննիչ դատարանը դրանց վերաբերյալ հանգել է այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը սխալ թույլ չի տվել՝ պատճառաբանելով նման եզրակացությունը եւ հղում կատարելով ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի հետազոտած համապատասխան ապացույցներին,

գ. այն փաստերը, որոնք հաստատվել են դատարանի կողմից եւ վերաքննիչ բողոքում վիճարկվել են, եւ վերաքննիչ դատարանը հանգել է այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը սխալ է թույլ տվել՝ պատճառաբանելով նման եզրակացությունը եւ հղում կատարելով նման եզրակացության հիմքում ընկած ապացույցների վրա: Նման դեպքերում վերաքննիչ դատարանը պետք է նշի, թե դատարանի կողմից հաստատված փաստի փոխարեն ինչ նոր փաստ է հաստատված համարում կամ դատարանի հաստատած որ փաստը հաստատված չի համարվում՝ պատճառաբանելով նման եզրահանգումը եւ հղում կատարելով առաջին ատյանի դատարանի հետազոտած համապատասխան ապացույցներին,

դ. այն փաստերը, որոնք չեն հաստատվել առաջին ատյանի դատարանի կողմից եւ այդ հանգամանքը վիճարկվել է վերաքննիչ բողոքում, եւ վերաքննիչ դատարանն առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա դրանք համարել է հաստատված՝ հղում կատարելով վերաքննիչ բողոք բերած անձի համապատասխան դիրքորոշմանը եւ առաջին ատյանի դատարանի հետազոտած այն ապացույցներին, որոնք ընկած են փաստի հաստատման հիմքում,

ե. այն փաստերը, որոնք հաստատել է վերաքննիչ դատարանը.

2) եզրահանգում՝ բողոքի յուրաքանչյուր հիմքի հիմնավոր լինելու վերաբերյալ, մասնավորապես պատասխանելով հետեւյալ հարցերին՝

ա. արդյո՞ք հիմնավոր է վերաքննիչ բողոքի հիմքը՝ բողոքում տվյալ հիմքի վերաբերյալ նշված հիմնավորումների սահմաններում,

բ. եթե վերաքննիչ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր չէ, ապա ի՞նչ հիմնավորմամբ՝ հղում կատարելով միջազգային պայմանագրերի, օրենքների եւ այլ իրավական ակտերի այն նորմերին ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն որոշումներին, որոնց հիման վրա վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր չէ,

գ. եթե վերաքննիչ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր է, ապա ի՞նչ հիմնավորմամբ՝ հղում կատարելով միջազգային պայմանագրերի, օրենքների եւ այլ իրավական ակտերի այն նորմերին, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն որոշումներին, որոնց հիման վրա վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր է,

դ. բողոքը հիմնավոր լինելու դեպքում արդյո՞ք վերաքննիչ բողոքում նշված՝ դատարանի կողմից թույլ տրված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումը ազդել է կամ կարող էր ազդել գործի ելքի վրա, թե ոչ՝ պատճառաբանելով համապատասխան եզրահանգումը:

3) սույն օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված լիազորությունը կիրառելու դեպքում՝ գործի նոր քննության ծավալը կամ նշում այն մասին, որ գործը պետք է քննվի ամբողջ ծավալով,

4) սույն օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված լիազորությունը կիրառելու դեպքում՝ արդարադատության արդյունավետության շահի առկայության վերաբերյալ հիմնավորումները,

5) եզրահանգումներ՝ ապացուցման առարկայի մեջ մտնող փաստերի, անվիճելի փաստերի շրջանակի կամ ապացուցման պարտականության բաշխման վերաբերյալ, եթե վերաքննիչ դատարանը գտել է, որ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը սխալ է որոշել ապացուցման առարկան, սխալ է որոշել անվիճելի փաստերի շրջանակը կամ սխալ է բաշխել ապացուցման պարտականությունը,

6) գործին մասնակցող անձանց միջեւ դատական ծախսերի բաշխման վերաբերյալ վերաքննիչ դատարանի դիրքորոշումը՝ վկայակոչելով համապատասխան իրավական նորմերը:

6. Որոշման եզրափակիչ մասը պետք է պարունակի՝

1) վերաքննիչ բողոքն ամբողջությամբ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու կամ վերաքննիչ վարույթը կարճելու մասին դատարանի եզրակացությունը.

2) վերաքննիչ բողոքը բավարարելու դեպքում՝ համապատասխան դատավարական հետեւանքը.

3) եզրահանգում՝ կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանելու կամ վերացնելու մասին,

4) եզրահանգում՝ գործին մասնակցող անձանց միջեւ դատական ծախսերը բաշխելու վերաբերյալ դատարանի.

5) կատարում ենթադրող որոշում կայացնելու դեպքում նշում՝ որոշումը կամովին չկատարվելու դեպքում այն պարտապանի հաշվին դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով կատարելու մասին,

6) որոշման բողոքարկման ժամկետն ու այն վերադաս դատական ատյանը, ուր կարող է ներկայացվել բողոքը:

7. Վերաքննիչ դատարանի որոշումը ստորագրում եւ կնքում են այն կայացրած դատավորները»:

Հոդված 11. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 220.1-րդ հոդվածով.

«ՀՈԴՎԱԾ 220.1 Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշումների դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացվող որոշումը

1. Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքներով վերաքննիչ դատարանը կայացնում է որոշում, որը պետք է բավարարի սույն օրենսգրքի 130.1-րդ հոդվածով սահմանված պահանջներին:

2. Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված բողոքի քննության արդյունքում կայացվող որոշումը պետք է պարունակի՝

1) վերաքննիչ դատարանի լրիվ անվանումը« գործի համարը, որոշման կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, վայրն ու դատարանի կազմը.

2) որոշում կայացրած ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի անվանումը, որոշման կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, դատավորի անունը, ազգանունը.

3) գործին մասնակցող անձանց եւ նրանց ներկայացուցիչների անունները, ազգանունները (անվանումները), վերաքննիչ բողոք բերած անձի անունը, ազգանունը (անվանումը), բողոքարկվող որոշման հակիրճ բովանդակությունը, վերաքննիչ բողոքի դեմ պատասխան ներկայացվելու դեպքում նաեւ՝ պատասխանը ներկայացրած անձի անունը, ազգանունը (անվանումը).

4) վերաքննիչ բողոքի հիմքերը եւ հիմնավորումները, վերաքննիչ բողոք ներկայացրած անձի պահանջը, վերաքննիչ բողոքի պատասխանի առկայության դեպքում՝ պատասխան ներկայացրած անձի դիրքորոշումը եւ հիմնավորումները.

5) գործով պարզված եւ վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաեւ այն միջազգային պայմանագրերի, օրենքների եւ այլ իրավական ակտերի նորմերը, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն որոշումները, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս.

6) վերաքննիչ բողոքն ամբողջությամբ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու կամ վերաքննիչ վարույթը կարճելու մասին դատարանի եզրակացությունը.

7) որոշման բողոքարկման ժամկետն ու այն վերադաս դատական ատյանը« ուր կարող է ներկայացվել բողոքը:

3. Վերաքննիչ դատարանի որոշման յուրաքանչյուր էջը ստորագրվում եւ կնքվում է այն կայացրած դատավորի կողմից»:

Հոդված 12. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 220.2-րդ հոդվածով.

«Հոդված 220.2. Դատական սխալի հիմքով դատական ակտի բեկանման հիմքերը

1. Դատական սխալի հիմքով դատական ակտի բեկանման հիմքերն են՝

1) նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը,

2) դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը»:

Հոդված 13. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 220.3-րդ հոդվածով.

«Հոդված 220.3. Նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը

1. Նյութական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե դատարանը՝

1) չի կիրառել այն օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը պետք է կիրառեր.

2) կիրառել է այն օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը չպետք է կիրառեր.

3) սխալ է մեկնաբանել օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը:

2. Նյութական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման»:

Հոդված 14. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 220.4-րդ հոդվածով.

«Հոդված 220.4. Դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը

1. Դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը դատական ակտի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի՝ ըստ էության ճիշտ դատական ակտը չի կարող բեկանվել միայն ձեւական նկատառումներով:

2. Դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝

1) դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով, այդ թվում՝ այնպիսի դատավորի կողմից, ով, ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի համաձայն, պարտավոր էր ինքնաբացարկ հայտնել,

2) դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որեւէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ ձեւով չի տեղեկացվել նիստի ժամանակի եւ վայրի մասին,

3) դատական ակտը ստորագրված կամ կնքված չէ այն կայացրած դատավորի կամ դատավորների կողմից,

4) դատական ակտը կայացրել է ոչ այն դատավորը(դատավորները), որը(որոնք) մտնում է (են)գործը քննող դատարանի կազմի մեջ,

5) գործից բացակայում է դատական նիստի կամ առանձին դատավարական գործողության կատարման արձանագրությունը,

6) գործը քննվել է ընդդատության կանոնների խախտմամբ,

7) դատական ակտը շոշափում է գործին մասնակից չդարձված անձանց իրավունքները եւ պարտականությունները,

8) առկա են սույն օրենսգրքի 103-րդ հոդվածով սահմանված՝ հայցն առանց քննության թողնելու հիմքերը, կամ

9) առկա են սույն օրենսգրքի 109-րդ հոդվածով սահմանված՝ գործի վարույթը կարճելու հիմքերը»:

Հոդված 15. Օրենսգրքի 223-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել « ՝ օրինական ուժի մեջ մտած» բառերը,

2) լրացնել 3-րդ մաս հետեւյալ բովանդակությամբ՝

«3. Գործին մասնակցող ֆիզիկական և իրավաբանական անձինք վճռաբեկ բողոք կարող են ներկայացնել միայն փաստաբանի միջոցով»:

Հոդված 16. Օրենսգրքի 231-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 231. Վճռաբեկ բողոքի բովանդակությունը

1. Վճռաբեկ բողոքում պետք է նշվեն՝

1) դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը.

2) բողոք բերող անձի անունը (անվանումը), ազգանունը, հայրանուն (անձը հաստատող փաստաթղթում առկայության դեպքում), դատավարական կարգավիճակը.

3) դատական ակտ կայացրած դատարանի անվանումը, գործի համարը, դատական ակտի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, գործին մասնակցող անձանց անունները (անվանումները), վեճի առարկան.

4) բողոք բերած անձի պահանջը՝ օրենքների, այլ իրավական ակտերի վկայակոչմամբ, եւ նշում այն մասին, թե նյութական կամ դատավարական իրավունքի որ նորմերն են խախտվել կամ սխալ կիրառվել, կամ որոնք են նոր երեւան եկած կամ նոր հանգամանքների հետեւանքով գործի վերանայման հիմքերը, եւ դրանց հիմնավորումները.

5) սույն օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի այն կետի առկայության մասին հիմնավորումները, որն ըստ բողոք բերողի հիմք է հանդիսանում վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համար.

6) բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:

2.Վճռաբեկ բողոքը սույն օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ներկայացնելու դեպքում բողոքը բերած անձը պետք է հիմնավորի, որ դրա վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կնպաստի օրենքի միատեսակ կիրառության ապահովմանը, մասնավորապես վճռաբեկ բողոքում հիմնավորելով, որ՝

1) տարբեր գործերով ստորադաս դատարանների առնվազն երկու դատական ակտերում միեւնույն նորմը կիրառվել է հակասական մեկնաբանությամբ՝ կցելով այդ դատական ակտերը եւ մեջբերելով դրանց հակասող մասերը՝ կատարելով համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի եւ նույնանման փաստական հանգամանքներով մեկ այլ գործով ստորադաս դատարանի դատական ակտում կիրառված միեւնույն նորմի՝ իրար հակասող մեկնաբանության վերաբերյալ.

2) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է ՀՀ սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասում բացահայտված՝ տվյալ նորմի սահմանադրաիրավական բովանդակությանը՝ կցելով ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը եւ մեջբերելով ստորադաս դատարանի դատական ակտի այն մասը, որը հակասում է ՀՀ սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասին՝ կատարելով համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի եւ ՀՀ սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասի միջեւ առկա հակասության վերաբերյալ.

3) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը՝ կցելով այդ դատական ակտերը եւ մեջբերելով դրանց հակասող մասերը՝ կատարելով համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի եւ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հակասության վերաբերյալ.

4) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը՝ կցելով այդ դատական ակտերը եւ մեջբերելով դրանց հակասող մասերը՝ կատարելով համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի եւ նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործով ՀՀ վճռաբեկ դատարանի դատական ակտի միջեւ առկա հակասության վերաբերյալ.

5) բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

3. Վճռաբեկ բողոքը սույն օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով ներկայացնելու դեպքում վճռաբեկ բողոքը բերած անձը վճռաբեկ բողոքում պետք է նշի այն նյութական կամ դատավարական իրավունքի նորմը, որը խախտվել է՝ հիմնավորելով այդ խախտումը եւ այն, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա:

4. Վճռաբեկ բողոքը ստորագրում է բողոք ներկայացնող անձի ներկայացուցիչը, գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը: Բողոքին կցվում է ներկայացուցչի՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով ձեւակերպված լիազորագիրը:

5. Վճռաբեկ բողոքին կցվում են նաեւ օրենքով սահմանված կարգով եւ չափով պետական տուրքի վճարած լինելը հավաստող փաստաթուղթը, եւ բողոքի պատճենը՝ գործը քննող դատարան եւ գործին մասնակցող անձանց ուղարկելու մասին ապացույցները, վճռաբեկ բողոքի էլեկտրոնային կրիչը: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, ապա վճռաբեկ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը:»:

Հոդված 17. Օրենսգրքի 233-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 233. Վճռաբեկ բողոք վերադարձնելը

1. Վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 231-րդ հոդվածի պահանջներին:

2. Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում՝ նշելով առկա թերությունները: Վճռաբեկ բողոքը կրկին ներկայացվելու դեպքում ժամկետները հաշվարկվում են վերստին:

3.Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ վճռաբեկ դատարանը սահմանում է մինչեւ մեկամսյա ժամկետ՝ ձեւական սխալները շտկելու եւ վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար»:

Հոդված 18. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 233.1-րդ հոդվածով.

«Հոդված 233.1. Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելը

1. Վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե՝

1) վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, եւ բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բացակայում է կամ այն մերժվել է.

2) վճռաբեկ բողոքը ներկայացրել է այն անձը, որը վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունք չուներ.

3) բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման վճռաբեկության կարգով.

4) վճռաբեկ բողոք ներկայացրած անձը մինչեւ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշման կայացումը դիմում է ներկայացրել վճռաբեկ բողոքը հետ վերցնելու մասին.

5) բողոքում նշված հիմքով նույն գործով վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել:

2. Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում»:

Հոդված 19. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 233.2-րդ հոդվածով.

«Հոդված 233.2. Վճռաբեկ բողոքն վարույթ ընդունելը մերժելը

1.Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվում է, եթե բացակայում են սույն օրենսգրքի 233-րդ հոդվածով, 233.1-րդ հոդվածով եւ 234-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը:

2. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված: Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման մեջ վճռաբեկ դատարանը պետք է հիմնավորի վճռաբեկ բողոքում վկայակոչված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ սույն օրենսգրքի 234-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերով նախատեսված յուրաքանչյուր հիմքի բացակայությունը:

3.Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից երեք ամսվա ընթացքում:

4. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը կայացվում է հանուն Հայաստանի Հանրապետության:»:

Հոդված 20. Օրենսգրքի 234-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 234. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը

1. Վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե վճռաբեկ դատարանը հանգում է այն հետեւության, որ՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար,

2) առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որ կարող էր ազդել գործի ելքի վրա, կամ

3)առկա է նոր կամ նոր երեւան եկած հանգամանք:

2. Սույն հոդվածի իմաստով՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, մասնավորապես եթե՝

1) տարբեր գործերով ստորադաս դատարանների առնվազն երկու դատական ակտերում միեւնույն նորմը կիրառվել է իրար հակասող մեկնաբանությամբ.

2) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասում բացահայտված՝ տվյալ նորմի սահմանադրաիրավական բովանդակությանը.

3) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը.

4) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը.

5) վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

3. Սույն հոդվածի իմաստով դատական սխալ են համարվում 220.4-րդ հոդվածով նախատեսված դեպքերը:

4. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից երեք ամսվա ընթացքում:

5. Վճռաբեկ դատարանի որոշումները պատշաճ ձեւով ուղարկվում են բողոք բերող անձին եւ գործին մասնակցող անձանց»:

Հոդված 21. Օրենսգրքի 237-րդ հոդվածի 1-ի մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«1. Վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատի դատավորներից մեկը (զեկուցող դատավորը) ուսումնասիրում է վճռաբեկ բողոքը, գործի նյութերը եւ զեկուցում վճռաբեկ դատարանի նիստում»:

Հոդված 22. Օրենսգրքի 241.1-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետեւյալ բովանդակությամբ 5.1-րդ կետը.

«5.1) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ սույն օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից առնվազն մեկի առկայության հիմնավորումը»:

Հոդված 22. Օրենսգրքի 241.2-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 241.2.Վճռաբեկ դատարանի որոշման օրինական ուժի մեջ մտնելը

1. Վճռաբեկ դատարանի՝ գործի քննության արդյունքներով կայացված որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է եւ ենթակա չէ բողոքարկման:

2.Վճռաբեկ դատարանի՝ սույն օրենսգրքի 233-րդ, 233.1-րդ եւ 233.2-րդ հոդվածներով նախատեսված որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում կայացման պահից, վերջնական են եւ ենթակա չեն բողոքարկման»:

Հոդված 23. Սույն օրենքի գործողությունը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների կողմից կայացվող դատական ակտերի, դրանց դեմ բերվող վերաքննիչ բողոքների եւ այդ բողոքների քննարկման արդյունքում կայացվող դատական ակտերի, վերաքննիչ դատարանի ակտերի դեմ բերվող վճռաբեկ բողոքների եւ այդ բողոքների քննարկման արդյունքում կայացվող դատական ակտերի վրա:

Հոդված 24. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,«ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍԻՆ»ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը,գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Հ. Սահակյան	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկում եմ փոփոփոխություններ կատարել առկա կարգավորումներում, որոնք ուղղված կլինեն Արդարադատության խորհրդում դատավոր և իրավաբան գիտնական անդամների մասնակցության	Ընդունվել է	Նախագծում կատարվել են առաջարկություններից բխող մի շարք փոփոխություններ, հատկապես՝. **Օրենսգրքի 98-րդ հոդվածում՝** Լրացվել է հետևյալ բովանդակությամբ 1.1 րդ մաս. «1.1 Նույն անձը չի կարող ավելի քան երկու

	հավասարակշռության ապահովմանը, Արդարադատության խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացմանը, որակավորման քննությունների ընթացակարգի կատարելագործմանը: Այդ առումով առաջարկում եմ դատավորի թեկնածուի համար սահմանել 28 տարվա նվազագույն տարիքային ցենզ՝ նկատի ունենալով մի շարք երկրների միջազգային փորձը, որը կապահովի ոչ միայն մասնագիտական փորձառություն, այլ նաև կյանքի համապատասխան փորձ ունեցող անձանց ընդգրկումը դատական իշխանության ոլորտ: Բացի այդ, Դատավորների ընտրության գործընթացը իր բոլոր փուլերով բացարձակապես դատական իշխանության ձեռքում չկենտրոնացնելու նպատակով, այդ գործընթացում դատական իշխանության մասնակցությունը հավասարակշռվի և զսպվի անհրաժեշտ է նախատեսել հանրային վերահսկողություն և քննական հարցաշարերի մշակման գործառույթների տարանջատման: Դատավորների ընտրության գործընթացում զգալի դեր պետք է ունենա նրա արժանիքների, մասնագիտական որակների և նրա մասին այլ կարևոր անհատական տվյալների մասին տեղեկությունների հավաքագրումը և վերլուծությունը: Արդարադատության խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված անհրաժեշտ է նույն անձի՝ երկրորդ անգամ անընդմեջ Արդարադատության խորհրդի անդամ ընտրվելը սահմանափակել՝ երաշխավորելով ռոտացիայի		անգամ անընդմեջ ընտրվել կամ նշանակվել Արդարադատության խորհրդի անդամ:»: 1) 2-րդ մասում լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն. «Արդարադատության խորհրդի իրավաբան գիտնական անդամ կարող է նշանակվել այն անձը, ով ունի գիտաուսումնական կազմակերպություններում վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն 3 տարվա աշխատանքի փորձ»: 2) Լրացվել է հետևյալ բովանդակությամբ 3.1-րդ մաս. «3.1. Արդարադատության խորհրդի իրավաբան գիտնական անդամներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով սահմանված համապատասխան միջոցների հաշվին Արդարադատության խորհրդի աշխատակազմի կողմից վճարվում է ամսական հատուցում նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկի չափով:»: **Օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին մասում՝** 1) 1-ին կետում «մեկ անդամ» բառերը փոխարինվել է «երկու անդամ՝ համապատասխանաբար քրեական և քաղաքացիական մասնագիտացմամբ

	սկզբունքը խորհրդի գործունեության կազմակերպման մեջ և կանխելով միևնույն անձանց՝ առանց որևէ սահմանափակման անընդմեջ խորհրդի անդամի պաշտոնը զբաղեցնելու հնարավորությունը, ինչը դրսևորվում է գործանկանում: Արդարադատության խորհրդի գործունեությանն իրավաբան գիտնական անդամների իրական, այլ ոչ թե ձևական մասնակցության ապահովմանն ուղղված Արդարադատության խորհրդի նիստն իրավազոր համարելու համար առնվազն 3 իրավաբան գիտնական անդամների պարտադիր մասնակցության պահանջ նախատեսել: Առաջարկում եմ նաև նախատեսել նաև Արդարադատության խորհրդի անդամի հատուկ կարծիքի ինստիտուտի նախատեսումը:		դատավորներից» բառերով. 2) 2-րդ կետում «երկու անդամ» բառերից հետո լրացվել է «՝ համապատասխանաբար քրեական և քաղաքացիական մասնագիտացմամբ դատավորներից» բառերով. 3) 8-րդ կետում «երկու» բառը փոխարինվել է «մեկ» բառով: **Օրենսգրքի 107-րդ հոդվածի 5**-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «5. Արդարադատության խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդը:»: **Օրենսգրքի 111-րդ հոդվածում՝** 1) 5-րդ մասի 1-ին նախադասությունում «համաձայնություն տալու վերաբերյալ» բառերից հետո լրացվել է «, ինչպես նաև դատավորների թեկնածությունների և դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակները կազմելու հետ կապված» բառերով. 2) «5-րդ մասի վերջում լրացնել նոր նախադասություններ՝ հետևյալ բովանդակությամբ. « Արդարադատության խորհրդի անդամը կարող է

			ներկայացնել հատուկ կարծիք Արդարադատության խորհրդում ընդունված ցանկացած որոշման վերաբերյալ: Եթե Արդարադատության խորհրդի անդամը որոշման վերաբերյալ ունի հատուկ կարծիք, այդ մասին նշում է արվում Արդարադատության խորհրդի որոշման մեջ և հատուկ կարծիքը կցվում է որոշմանը:»: **Օրենսգրքի 115-րդ հոդվածում՝** 1) 3-րդ մասում «անցողիկ միավորը» բառերից հետո լրացվել է «, ինչպես նաև Արդարադատության խորհուրդ ներկայացված հավակնորդների վերաբերյալ սույն օրենսգրքի 116-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան հարցումների իրականացման կարգը, հարցման շրջանակում ընդգրկված մարմինները ցանկը և հարցման նպատակով կիրառվող գրավոր հարցաթերթիկների ձևը». 2) 3.1-րդ մասի 1-ին նախադասությունում «Քննական հարցերի» բառերից հետո լրացվել է «, ինչպես նաև սույն օրենսգրքի 115.2-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հոգեբանական թեստի» բառերը. 3) 4-րդ մասում «22» թիվը

			փոխարինել «28» թվով, իսկ «իրավունքից» բառից հետո լրացնել «, ունեն առնվազն 3 տարվա մասնագիտական ստաժ» բառերը: **Օրենսգրքի 115.2-րդ հոդվածը** շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «**Հոդված 115.2. Որակավորման գրավոր քննությունը** 1. Որակավորման գրավոր քննությունն անցկացվում է համապատասխանաբար քրեական, քաղաքացիական կամ վարչական մասնագիտացման ոլորտում թեստերի միջոցով, որոնք պարունակում են իրավական խնդիրներ՝ առաջադրված փաստական հանգամանքների նկատմամբ իրավունքի նորմերը կիրառելու և վերլուծելու պահանջով: 2. Իրավական խնդրում ներկայացված յուրաքանչյուր հանգամանք վեր հանելու, վերլուծելու և իրավական որակում տալու համար տրվում է համապատասխան միավոր՝ կախված հանգամանքների բարդությունից: 3. Սույն հոդվածով նախատեսված գրավոր քննության ժամանակ հավակնորդին կարող են

			տրամադրվել հանձնարարվող խնդիրների փաստական հանգամանքների վերաբերյալ նյութեր, ինչպես նաև խնդրի լուծման համար անհրաժեշտ տեսական գրականություն և իրավական ակտեր, որոնց շրջանակը որոշում է սույն օրենսգրքի 115.-րդ հոդվածի 3.1-րդ մասով սահմանված կարգով ընտրված համապատասխան մասնագետը (մասնագետները) կամ մասնագիտացված կազմակերպությունը: 4. Թեստերը կարող են պարունակել նաև բազմակի ընտրության հարցեր: 5. Սույն հոդվածով նախատեսված թեստն ուղղված է, բացի ակադեմիական գիտելիքներից, նաև հավակնորդի վերլուծական կարողությունների, բարդ տեքստերի համակարգված, արագ ըմբռնման կարողությունների ստուգմանը: 6. Թեստի ժամանակ հարցերն ընտրվում են պատահականության սկզբունքով: Թեստի անցկացման համար նախատեսված հարցերի ընդհանուր քանակը, որի միջից կատարվում է հարցերի ընտրությունը, պետք է առնվազն կրկնակի գերազանցի մեկ թեստի համար նախատեսված հարցերի քանակը:

			7. Արդարադատության խորհուրդը սահմանում է սույն հոդվածով նախատեսված թեստի անցկացման համար մշակման ենթակա տարբերակների նվազագույն քանակը: 8. Որակավորման գրավոր քննության օրվանից առնվազն 10 օր առաջ Արդարադատության խորհրդի աշխատակազմը հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է սույն հոդվածով նախատեսված որակավորման գրավոր քննության առաջադրանքների առնվազն մեկ նմուշօրինակ: 9. Սույն հոդվածով նախատեսված որակավորման գրավոր քննության արդյունքներով անցողիկ միավորներ հավաքած հավակնորդները անցնում են հոգեբանական թեստ՝ ուղղված պատասխանատվության զգացման, ունկնդրելու կարողության, ինքնատիրապետման, հեղինակության (ազդեցության) չափավոր կիրառման և դատավորի աշխատանքի համար անհրաժեշտ ոչ մասնագիտական այլ հատկանիշների ստուգմանը:

			10. Հոգեբանական թեստի արդյունքները ունեն միայն խորհրդատվական նշանակություն, ենթակա չեն հրապարակման և տրամադրվում են միայն Արդարադատության խորհրդի անդամներին՝ խորհրդում հարցազրույցի անցկացումից հետո մինչև ամփոփիչ քննարկումը: Հոգեբանական թեստի արդյունքները դատավորների թեկնածությունների ցուցակը Հանրապետության Նախագահի կողմից հաստատվելուց հետո ենթակա են ոչնչացման:»: **Օրենսգրքի 115.3-րդ հոդվածում՝** - Լրացվել է հետևյալ բովանդակությամբ 6.1-րդ մաս. «6.1. Գնահատման և բողոքարկման հանձնաժողովների անդամներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով սահմանված համապատասխան միջոցների հաշվին Արդարադատության խորհրդի աշխատակազմի կողմից վճարվում է հատուցում նվազագույն աշխատավարձի ... չափով:». -29-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

			«29. Բողոքարկման հանձնաժողովը բողոքները քննում է բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Բողոքարկման արդյունքներով կայացված որոշումները պատճառաբանվում են: Դրանք անհապաղ հրապարակվում են դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում՝ նշելով սկզբնական և բողոքարկման արդյունքում ստացված միավորները»: **Օրենսգրքի 116-րդ հոդվածում՝** 1) 3-րդ մասը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 2-րդ նախադասությամբ. «Պետական մարմինները և պաշտոնատար անձինք նշված տեղեկությունները պարտավոր են տրամադրել նաև Արդարադատության խորհրդի պահանջով:» 2) 5-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «5. Արդարադատության խորհրդի աշխատակազմը Արդարադատության խորհրդի կողմից սահմանված կարգով գրավոր և բանավոր հարցումներ է կատարում հավակնորդի աշխատավայրից, բարձրագույն ուսումնական հաստատություններից և հավակնորդի հետ

			առնչվող այլ հաստատություններից՝ հավակնորդի մասնագիտական որակների և անձնական հատկանիշների վերաբերյալ, ինչպես նաև հարկային և Արդարադատության խորհրդի կողմից սահմանված այլ վարչական մարմիններից օրենքով սահմանված կարգով ստանում է հավակնորդին վերաբերող անհատական տվյալներ: Արդարադատության խորհրդի աշխատակազմը Արդարադատության խորհրդի կողմից սահմանված կարգով իրականացնում է նաև հավակնորդի կողմից ներկայացված փաստաթղթերի հավաստիության ստուգում:»: 3) Լրացվել է հետևյալ բովանդակությամբ 8-րդ մաս՝ «8. Արդարադատության խորհրդում հարցազրույցին մասնակցող անձինք իրավունք ունեն դիմելու և դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան Արդարադատության խորհրդում հարցազրույցին նախորդող օրը ծանոթանալու սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված իրենց անձնական գործին:»: **Օրենսգրքի 117-րդ հոդվածում՝**

			1) 4-րդ մասում «հարցաթերթերի և ամփոփիչ քննարկման ժամանակ արտահայտված կարծիքների հիման վրա» բառերը փոխարինվել են «հարցաթերթերի, ամփոփիչ քննարկման ժամանակ արտահայտված կարծիքների և Արդարադատության խորհրդի անդամների կողմից ներկայացված հատուկ կարծիքների հիման վրա» բառերով: 2) 7-րդ մասը «զեկույցները» բառից հետո լրացվել է «՝ Արդարադատության խորհրդի անդամների կողմից ներկայացված հատուկ կարծիքների հետ միասին» բառերը: 3) 8-րդ մասում «՝ իր համար ընդունելի թեկնածություններով» բառերը փոխարինվել են «կամ այն վերադարձնում է Արդարադատության խորհուրդ՝ պահանջելով նոր քննարկում» բառերով: 4) Լրացվել են հետևյալ բովանդակությամբ 9-րդ, 10-րդ և 11-րդ մասերով. «9. Արդարադատության խորհուրդը, Հանրապետության Նախագահի վերադարձրած թեկնածությունների ցուցակը ստանալու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Հանրապետության Նախագահին է ուղարկում

			փոփոխված ցուցակ կամ կարող է Հանրապետության Նախագահին ներկայացնել անփոփոխ ցուցակ, եթե դրա օգտին են քվեարկում Խորհրդի անդամների երկու երրորդը: 10. Հանրապետության Նախագահի կողմից թեկնածությունների ցուցակը վերադարձնելու դեպքում Արդարադատության խորհուրդն իրավունք ունի ըստ անհրաժեշտության կրկին հրավիրել և լսել սույն օրենսգրքի 116.1-րդ հոդվածով սահմանված կարգով Խորհրդում հարցազրույցի ներկայացված հավակնորդների: 11. Հանրապետության Նախագահի կողմից թեկնածությունների ցուցակը վերադարձնելու դեպքում Արդարադատության խորհրդում հարցազրույցի, թեկնածությունների ցուցակի կազմման ու հաստատման վրա տարածվում են սույն օրենսգրքի 116-րդ և 117-րդ հոդվածների դրույթները:»:
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Արծվիկ Մինասյան	1. Առաջարկվում է նախագծի 15-րդ հոդվածով փոփոխվող 107-րդ հոդվածի 5-րդ մասում լրացնել դրույթ, որի համաձայն՝ Արդարադատության խորհրդի նիստն իրավազոր կլինի, եթե նիստին մասնակցում է խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդը: 2. Առաջարկվում է նախագծի 12-րդ հոդվածով օրենսգրքի 98-րդ հոդվածում լրացվող 3.1-րդ կետում սահմանել, որ արդարադատության խորհրդի իրավաբան	1. Ընդունվել է 2. Ընդունվել է	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

	գիտնական անդամներին Արդարադատության խորհրդի աշխատակազմի կողմից վճարվում է ամսական հատուցում նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկի չափով: 3. Նախագծի 12-րդ հոդվածից պարզ չէ, թե նույն անձի կողմից ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվելու արգելքը տարածվում է արդյոք Արդարադատության խորհրդի իրավաբան գիտնական անդամների վրա: Առաջարկվում է հոդվածը խմբագրել այնպես, որ նշված արգելքը տարածվի և Արդարադատության խորհրդի դատավոր անդամների և իրավաբան գիտնական անդամների վրա: 4. Առաջարկվում է նախագծի 17-րդ հոդվածում հստակեցնել աշխատակարգային որոշումների հետ կապված հարաբերությունները, մասնավորապես ինչ բնույթի կարող են լինել այդ որոշումները:	Ընդունվել է 4. Չի ընդունվել	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: 3. Չնայած այն հանգամանքին, որ դատական օրենսգրքի 103-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ Արդարադատության խորհրդի՝ Հանրապետության Նախագահի կողմից նշանակված իրավաբան գիտնականների լիազորությունները դադարում են Հայաստանի Հանրապետության Նախագահի լիազորությունները դադարելու դեպքում նոր անդամի նշանակմամբ, այդուհանդերձ նախագծում առավել հստակեցվել է, որ նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ *ընտրվել* կամ *նշանակվել* Արդարադատության խորհրդի անդամ: 4. Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Արդարադատության խորհուրդը իր քննարկման ենթակա հարցերի նախապատրաստման նպատակով, ինչպես նաև իր գործունեության կազմակերպման հետ կապված այլ հարցերով* ընդունում է աշխատակարգային որոշումներ:
ՀՀ կառավարություն	Առաջարկվում է ներկայացված փաթեթի հետ ներկայացնել «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագիծ,	Ընդունվել է	Մշակվել է համապատասխան օրենքի նախագիծ՝ առաջարկվող բովանդակությամբ:

	որով 9-րդ հոդվածում լրացնել 6-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ. «6. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը չի տարածվում այն անձանց վրա, ովքեր սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առնվազն 10 տարի պաշտոնավարել են դատավորի պաշտոնում: Սույն մասով նախատեսված անձանց՝ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հիմքերով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքերով դատավորի լիազորությունների դադարեցման դեպքերում նշանակվող կենսաթոշակի չափը հաշվարկվում է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար ստացած աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարի հանրագումարի) գումարի և զրո ամբողջ ինը տասնորդական գործակցի արտադրյալի 55 տոկոսի չափով: Եթե սույն մասով սահմանված կարգով հաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով հաշվարկվող կենսաթոշակի չափից, ապա տվյալ անձի դիմումի հիման վրա կենսաթոշակը նշանակվում է սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով»:		